# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ՍՄՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 80 | Բրիլիանտե Սպրեյ | Բրիլիանտե Սպրեյ | Բրիլիանտե Սպրեյ | ՀԻԳԻԵՆԱ-ՄԵԴ | Միջոցն իրենից ներկայացնում է օգտագործման համար պատրաստի թափանցիկ անգույն հեղուկ `բնորոշ սպիրտի հոտով: Որպես ազդող նյութեր պարունակում է` իզոպրոպիլ սպիրտ ( 65-66%) , N,N-բիս-3-ամինոպրոպիլ (0,13-0,15%) , N,N-դիդեցիլ-N,N-դիմեթիլամոնիումի քլորիդ (0,07-0,08%) , ինչպես նաև ֆունկցիոնալ բաղադրիչների կոմպլեքս: Միջոցն արտադրվում է 0,75լ տարողությամբ ցողիչ գլխիկով (կամ առանց դրա) պոլիմերային տարաներով: Միջոցն ունի հակամանրէային ակտիվություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գրամբացասական և գրամդրական բակտերիաների, ներառյալ աղիքային վարակների հարուցիչների` Escherichia coli, Salmonella typhimurium և այլն, տուբերկուլոզի միկոբակտերիաների ( թեստավորված է Mycobacterium B5, Mycobacterium terrae DSM 43227 վրա), ինչպես նաև ներհիվանդանոցային վարակների վրա ,այդ թվում Pseudomonas aeruginosa, Staphylococcus aureus -ի մեթիցիլեն-ռազիստենտ, պենիցիլին-ռազիստենտ, վանկոմիցին-ռազիստենտ շտամների; վիրոսների` պոլիոմիելիտի, էնտերալ և պարէնտերալ հեպատիտների, ՄԻԱՎ, ECHO, ռոտավիրուսի, ռինովիրուսի, ադենովիրուսի, գրիպի (այդ թվում H5N1, H1N1 և այլն ), պարագրիպի, կարմրուկի, սուր շնչառական վարակիչ հիվանդությունների հարուցիչների, ատիպիկ թոքաբորբի, ֆունգիցիդ հատկությամբ կանդիդոզի և տրիխոֆիտիայի հարուցիչների, բորբոսասնկերի ( թեստավորված է Aspergillus niger, Mucor spp. թեստ-շտամների վրա) նկատմամբ: Միջոցն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ունի երկարատև մանրէասպան ազդեցություն առնվազն 3 ժամվա ընթացքում, լրիվ չորանալուց հետո մակերեսներին հետքեր չի թողնում, չի փչացնում մշակված մակերեսները, չի գունաթափում գործվածքները: Միջոցը նախատեսված է ցանկացած արագ վարակազերծում և չորացում պահանջող մակերեսների համար՝ բոլոր տեսակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, այդ թվում՝ ստոմատոլոգիական կլինիկաներում,ընդունարաններում,վերակենդանացման բաժանմունքներում, վիրահատարաններում,ակնաբուժական կաբինետներում, մանկական ստացիոնարներում, ծննդատներում և մանկաբարձական բաժանմունքներում (ներառյալ՝ նեոնատոլոգիական բաժանմունքները, նորածինների հիվանդասենյակները), զննման, ամբուլատոր ընդունելությունների կաբինետներում, և այլ օբյեկտներում, որտեղ պահանջվում է արագ և անհապաղ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ախտահանում: Միջոցը օգտագործվում է նաև որպես ախտահանիչ տարբեր նյութերից (մետաղներ, ապակի,պլաստիկե,ռետինե) պատրաստված բժշկական նշանակության առարկաների (բացառությամբ խորոչներ և ծորաններ ունեցող առարկաները), ներառյալ բժշկական տոնոմետրեր, ռենտգեն-սկավառակներ,սթետոսկոպներ և ֆոնենդոսկոպներ, ստոմատոլոգիական գործիքներ ( այդ թվում՝ պտտվող բորեր, ստոմատոլոգիական ալմաստյա գլխիկներ և այլն), ստոմատոլոգիական ծայրադիրներ, հայելիներ և այլն: Վարակազերծման ժամանակը ըստ առանձին հարուցիչների կազմում է 1-5 րոպե: Միջոցի պիտանիության ժամկետը չբացված գործարանային տարրողությունում կազմում է 5 տարի: Ունի ISO 9001 որակի սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍՄՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 80 | Бриллиантовый Спрей | Бриллиантовый Спрей | Бриллиантовый Спрей | ГИГИЕНА-МЕД | |